ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Տնօրինություն 28. 04. 2022թ. թիվ 12 որոշմամբ

«CASCO UNIVERSAL» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. CU02
Ակտիվի դաս՝ հրապարակային

1. Ի՞ՆՉ Է «CASCO UNIVERSAL» ԾՐԱԳԻՐԸ

«CASCO UNIVERSAL» ծրագիրն առաջարկում է ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրություն հետևյալ ռիսկերից՝

- *Վթար (ՃՏՊ),*
- *Բնական աղետներ,*
- *Հրդեհ, պայթյուն, որն առաջացել է ՃՏՊ հետևանքով,*
- *Կենդանիների կողմից հասցված վնաս,*
- *Թռչող սարքավորումների կամ այլ առարկաների, այդ թվում՝ ծառերի, քարերի, բեկորների, ձյան կամ սառույցի վայր ընկնելու հետևանքով հասցված վնաս,*
- *Ավտոտրանսպորտային միջոցի՝ ջուրն ընկնելու հետևանքով հասցված վնաս,*
- *Երրորդ անձանց գործողություններ,*
- *Ավտոտրանսպորտային միջոցի հափշտակություն:*

Ծածկույթի բացառություններն են՝

- *Ինքնաբռնկում,*
- *Միայն ապակիներին վնաս,*
- *Դետալների հափշտակություն,*
- *ԿԱՄԿՈ ապահովագրության ստանդարտ բացառություններ:*

2. ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ « CASCO UNIVERSAL» ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«CASCO UNIVERSAL» ապահովագրության պայմանագիր կարող է ձեռք բերել.

- *ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը,*
- *ավտոտրանսպորտային միջոցի վարձակալը:*

3. Ո՞Ր ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ

Ավտորանսպորտային միջոցները (ԱՄ) և դրանց լիազորված տիրապետողները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին՝

- *ԱՄ արտադրության տարի՝ 1995 – 2015 **
- *ԱՄ տեսակ՝ Մարդատար, «B» կարգ*
- *ԱՄ շահագործման նպատակ՝ Անձնական*

- *Վարորդի տարիքը՝ 21 տարեկան և ավելի*
- *Վարորդի ստաժը՝ 3 տարի և ավելի*
- *Վարորդի ԲՄ դասը՝ 1 – 14 ԴԱՍ*

** Ապահովագրման ենթակա չեն հատուկ խմբի մեջ մտնող ԱՄ-ները, որոնք սահմանվում են հաշվիչով:*

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

*Ապահովագրական գումար***	*Տարեկան ապահովագրավճար*
1,800,000 ՀՀ դրամ	*60,000 ՀՀ դրամ*

Կախված Վարորդի ԲՄ Դասերից՝ տարեկան ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգավորիչ գործակիցները.

Բոնուս-Մալուս Դաս	**Կարգավորիչ գործակից /կիրառվում է 1 տարվա համար հաշվարկված ապահովագրավճարի նկատմամբ/**
1 – 6 ԴԱՍ	1
7 – 9 ԴԱՍ	1.5
10 – 14 ԴԱՍ	2

***Ինքնավթարի դեպքում հատուցման առավելագույն չափը՝ 200,000 ՀՀ դրամ:*

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել՝

- *1 տարի ժամկետով*
- *6 ամիս ժամկետով*

Ապահովագրության պայմանագիրը 6 (վեց) ամիս ժամկետով կնքելու դեպքում տարեկան ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է 0.6 կարգավորիչ գործակիցը:

6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

50,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:

7. Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անձնագիր,
- Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր,
- Լիազորված տիրապետողի անձնագիր և վարորդական վկայական:

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված ««CASCO UNIVERSAL» ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության պայմաններ»-ով: